

հանցագործների գործողությունները» (Wegner A. T., «Am Kreuzweg der Welten», էջ 224):

1921-ին Վեգները որպես վկա ներկա է եղել Ս. Թեիլերյանի դատավարությանը Բեռլինում, հավաքել է սղագրական նյութերը, գրել առաջաբան («Արդար վճիռ») և հրատարակել առանձին գրքով («Թալեաթ Փաշայի դատավարությունը...», 1921):

1922-ին հրատարակված «Ճիշ Արարատից» գրքույկում, ներկայացնելով Ջնյունիայի կոտորածները, Վեգները դարձյալ ներկացրել է Թուրքիայի կառավարող շրջանների հայատյաց քաղաքականությունը և արևմտյան տերությունների անտարբերությունը:

1933-ին, ֆաշիստների իշխանության գլուխ անցնելուց հետո Հիտլերին ուղղած բաց նամակում Վեգները դատապարտել է հրեական ջարդերը, բանտարկվել է, նետվել համակենտրոնացման ճամբար: 1934-ին փախել է Գերմանիայից և երկարատև չարչարանքներից հետո հաստատվել Հռոմում (Պերսի էքշտայն անվան տակ): Վեգները մեկն է այն 250 գրողներից ու գործիչներից, որոնց գրքերն արգելվել և այրվել են ֆաշիստական Գերմանիայում:

Վեգները գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, էսսեներ, նովելներ, ճանապարհորդական նոթեր, որոնց բնորոշ են մարդասիրությունը, եղբայրության գաղափարը, որևէ ազգի հալածանքի մերժումը: Բանաստեղծությունների առաջին գրքույկը հրատարակվել է դեռևս դպրոցական տարիներին: 1910-ին տպագրվել է «Արձակ բանաստեղծություններ» ժողովածուն:

Վեգները «Երկու քաղաքների միջև» (1909), «Լսիր իմ խոսքը, Աննա Մարիա» (1912), «Քաղաքների դիմապատկերը» (1917), «Հազար նպատակներով փողոցը» (1924) բանաստեղծությունների ժողովածուներում գերմանական գրականության մեջ ներմուծել է մեծ քաղաքի թեման: Այդ թեման շոշափված է նաև նրա լավագույն վեպերում՝ «Խոստովանություն» (1922), «Մոնի կամ Աշխարհը ներքևից» (1929): Վեգներին հետաքրքրել է արևելյան թեման: Գերմանական գրականության մեջ նա առաջինն է ներկայացրել Արևելքն առանց վարդագույն երանգավորման՝ «Երանության տանը» (1920), «Պատանի Հուսեյնը» (1921) և այլ պատմվածքներ: Վեգների ստեղծագործության մեջ զգալի տեղ են գրավում ճանապարհորդական նոթերը՝ «Աշխարհների խաչմերուկում» (1930), «Պատվի առնել» (1930, տպավորություններ Սովետական Ռուսաստանից և Հայաստանից), «Մեքենաները տափաստանում» (1932), «Որս հազարամյա երկրում» (1932):

1927-ին սովետական կառավարության հրավերով Վեգներն իր կնոջ՝ արձակագիր Լ. Լանդաուի հետ այցելել է Մոսկվա, մասնակցել Հոկտեմբերյան հեղափոխության X տարեդարձի հանդիսություններին, եղել Հայաստանում, հանդիպել իր հին բարեկամներին (Կարապետ Մելիք-Օհանջանյան, Հակոբ Զորյան և ուրիշներ), որոնց հետ ծանոթացել ու մտերմացել էր Բեռլինում, 1918–1920 թթ.), Երևանի համալսարանում դասախոսություններ կարդացել գերմանական նոր պոեզիայի և Հին Հունաստանի թատրոնի ու թատերգության մասին: Միաժամանակ նյութեր է հավաքել հայերի մասին եռերգություն գրելու համար: Գործը մնացել է անավարտ: Տպագրվել է միայն մի հատված՝ «Պատանի Ադամը» վերնագրով: Վեգները վերստին Հայաստան է այցելել 1968-ին:

Մինչև կյանքի վերջը նա հետաքրքրվել է Հայաստանով ու հայերով, հանդես եկել նրանց նվիրված հոդվածներով, էսսեներով, հուշերով: 1972-ին ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում լուսանկարների ցուցադրումով զեկուցումներ է կարդացել Մեծ եղեռնի և բարգավաճող Սովետական Հայաստանի մասին:

2004թ-ին հայ ռեժիսոր Տիգրան Խզմալյանը նախաձեռնեց «Ցեղասպանության լուսանկարիչը» ֆիլմի ստեղծումը: Մինչ այժմ ֆիլմը թարգմանվել է տարբեր լեզուներով, ինչպես նաև՝ թուրքերեն: Ցուցադրվել է Նիդերլանդներում և Իրանում:

{youtube} [5y_0PzHSHgA](https://www.youtube.com/watch?v=5y_0PzHSHgA) {/youtube}